

ԲԱՃԱՆՈՐԴԱԿՐՈՒԹՅՈՒՆ

Պուշկարիոյ համար սարեկան 10 ֆրանկ. վեցամսեայ 5 ֆրանկ. Արսասահմանի համար սարեկան 12 ֆրանկ. վեցամսեայ 6 ֆր.

ԿԱՆՆՈՒԿ ՎՃԱՐՆԵԼԻ

Գրութիւնք և յեն տրուիր:

Իրանացուան տողը 20 սանրիւն է:

ԳԻՆ 10 ՍԱՆԹԻՄ

ՇԱՐՋՈՒՄ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ
ԿԸ ՀՐԱՏԱՐԱՎՈՒԻ ՉՈՐԵՔԵՍԱԲՈՒ ԵՒ ՇԱՐՋՈՒՄ ՕՐԵՐԸ

ОТГОВОРНИКЪ: Д-ръ Т. Хр. СТОЯНОВЪ.
А Д В О К А Т Ъ

Նամակ եւ դրամ որպէս
իւրաքանչեւ հասցին.

Редакция на вѣстникъ
«Шаржумъ»
Варна.

Redaction du journal
«Charjoum»
Varna (Bulgarie).

ԳԻՆ 10 ՍԱՆԹԻՄ

ԳՐՉԱԿՈՒԹԻՒՆ

—)(—

Ժամանակ մը, շատ հեռու չէ, մինչեւ ասկէջ երկու երեք տարի առաջ, Պոլսոյ հայ գրականութեան մէջ բացուած էր նոր շրջան մը, — վիժած գրականութեան շրջանը: Ազգային վարժարաններու կիսաւարտ թափափուքներ, իմաստակ դասատուի մը ճոռոմ ու փրօն ասացուածներովը սնած ու լեցուած, ու նաեւ օրուան նկարագրող ու նախշուն գրականութեան հասուածներովը անգիտակցաբար ու մեքենայօրէն յափշտակուած, փորձեցին իրենք ալ նոյն շաղկէն վազել գրական փունջեր ցրցըրնելու ու փոխաբէն գափնիներ յափշտակելու համար:

Գորոցականի սիրուն երազ, որ կ'ընդ յուսախարութեանով կը սկսի ու շիկնեցնող նահանջով կը վերջանայ միշտ:

Պոլսոյ մէջ շատ մտախիչ տեսանք այս որքան ծիծաղելի այնքան տխուր երեւոյթը: Խմբագրատուններու մէջ թուղթի դէզեր յօրինուեցան մեր անմիջապէս գրչակներուն գրական փորձերէն կամ, մանաւանդ, փորձանքներէն ձեւացած:

Այս մանր մուկը գրագէտիկները իրենց կեանքի օրակարգին մէջ անցուցած էին սակարակ բանաձեւը. «ինչ ըլլայ չըլլայ» գրել, քանի որ գրելով կը բացուին մարդու միտքն ու ստալանդը, և յետոյ, հապա գրագէտի համբաւը: Իրենց գլխաւոր զէնքերն էին յամառութիւն, աներեսութեամբ համեմուած, աղբրանք, և երբեմն ալ, շատ նեղ պարագաներու մէջ, սպառնալիք: Բայց գործը այսքան զոհողութիւն կը վերցնէր արդէն. երեւակայել որ՝ գրչակ մը պիտի կրնար մէկ երկու ոտանաւորով կամ արձակ բանաստեղծութեամբ Զօհրապի և Չօպանեանի ոտքն առնել քիչ ժամանակուան մէջ: Այս փառաւոր նպատակակէտին առջեւ՝ արժանապատուութեան աննշան ու վազանցիկ խնդիրներ կը նսեմանային անշուշտ:

Բայց հոսանք մը, աւերող ամպրոպ մը, 96ի աղէտը եկաւ տակնուվրայ ըրաւ ամէն բան. չխնայեցնաւ մեր նորատի գրագէտներուն, որոնք աշխարհի չորս հովերուն գացին տարբերակեցան: Պոլսոյ գրականութիւնը հիւանդութենէ մը աղտոտ էր:

Սակայն՝ անպարարի վարպետ ոտանուով մը անոնք միւս կողմէն դուրս ելան, արտասահմանի երկնքին տակ, ոչ այնչափ ընդարձակ տարածութեան վրայ, բայց վերջապէս այնքան որքան պէտք է բանի մը գոյութիւնը հաստատելու համար:

Հիմակ գրչակութիւնը տեղի ասնձարձակ ու անկաշկանդ սպարէզի մը վրայ կը գտնուի. արտասահմանի մամուլի մէկ քանի նմաններ իրենց գունդը բացած են անոր առջեւ, թոյլատու ու ներողամիտ, աղէկի ու գէշի մասին բարակը չփնտռելով: Թերթը ավելցիկը բաներով լեցնելու ու հասարակութեան առջեւ նետելու միակ մարմնով տառապող խմբագիրներ չեն վարանիր իրենց թանկագին քաջալերը զլանալու սղորմելի գրողներու, որոնք գրականութեան ամէն ճիւղերը շոշափելու և հարստացրնելու ամբարհաւած յաւակնութեամբ՝ շղարշին ու վարդին շուրջը կը դարձնէին, անձանաչ ու անարդիլ քերթուածներու և արձակներու անսպառ հոսանք մը փոխելով ալ ու անեակ:

Գոնէ իրենց կարծեցեալ գրագէտի մորթին տակ մնային. չէ՛, կողմն իրենց բարձր կարծիքը չզլանալ նաեւ յեղափոխութեան, զոր ուղղելու և վարելու համար վճռական եղանակներ ցոյց կուտան, նախատինքներ ցայտեցրնելով ամենէն նուիրական բուններու վրայ, սեւ մուր մը ծեփելով՝ անգիտակցաբար՝ այն երիտասարդութեան որուն իրենք ալ պատկանելու ցաւալի իրողութիւնը կայ ու կը մնայ:

Ճշմարտութիւնը խոտոտանելու համար, ըսենք սակայն թէ յանցանքը ոչ այնչափ այս խնդրուկ անգիտակցի գրչակներունն է որչափ թերթի վարչներուն, որոնք հասուն ու խորհող մարդիկն են երեւակայելու և հեռու պէտքերը անգիտակցաբար մտնողները:

Ե որչափ թերթի վարչներուն, որոնք հասուն ու խորհող մարդիկն են երեւակայելու և հեռու պէտքերը անգիտակցաբար մտնողները:

ՇԱՐՋՈՒՄ

ՀԱՅԱՍՏԱՆ ՍՈՎԱՏԱՆԶ

Հ Ա Ն Գ Ա Ն Ա Կ Ո Ւ Թ Ի Ւ Ն

—)(—

Ը. ՅՈՒՅԱԿ

Գումար է. ցուցակի	Յր.ՍՃ.
Ոմն	262.40
	5.—
Համագումար	267.40

ՀԱՅՐԵՆԻՔԻ ՅԻՇԱՍԱԿՆԵՐ

—)(—

Տխուր ու գաղարիչ սպաւորութեանց անգիտակցիկ ազդեցութեան տակ անցանք այս անտառի մէջէն. հազիւ մեր առաջին քայլերը լերկ գետնի մը աւազախառն հողը կընդգրկեն, անձ մեր ալ կողմէն՝ հարաւային ուղղութեամբ՝ կը տեսնենք «Բելու» անուն հայ գիւղը, որ իր հարիւր տան մօտ երկրագործ ու ժիր բնակիչներով կը ապրածուի: Ընծաքարի յարակից լեռնաշղթայի ստորոտը: Մեր ուղին այսպէս միշտ զէպի արեւելք երկարուելով, գրէթէ մէկ ժամէն կը հասնինք Ս. Հայրապետի ամառի ու անրնակ վանքը, որ ան ժամանակ այրիացած մօր մը պէս իր տխուր երեսը այդ լեռնաշղթայի ստորոտէն զէպի «Բելու», նանիկանց հայ գիւղերը դարձնելով կուլայ իր անցեալ փառքը՝ որ մեր ամենուս ալ անբաժան ցաւն ու լացն է: Ս. Հայրապետի վանքը ունեցեր է զրէթէ 60-70 ապրիներ առաջ իր նիւթական գոհացուցիչ կազմակերպեալ վիճակը, կանոնաւոր վանական կացութիւն ու այն ամէն հանգամանքը, ինչ որ անհրաժեշտ էր այդպիսի մենաստանի մը համար: Սակայն երբ սակաւ թրքական մոլորանդ ըրբարտութիւնն իր դժոխային ժանիքները ցոյց տալով հակահայկական ամէն շարիքները գաղանաբար քիւրտի արիւնտ ձեռքերով կը սկսին ի գործ դրուել, այս երբեմնի չէն ու զիջակերտ վանքը, Հայաստանի ուրիշ շատ մը վանքերի

նման, իր նսեհի փայլը կորսնցնելով, իր բոլոր ինչքն ու ստացուածքը իսկ Մէհմուտ քիւրտ բէկի ձեռքը կը մնան, ու ինքը՝ այդ տխուր օրերէն ի վեր, յուշիկ յուշիկ յօշոտուելով, իր նրբակերտ կաթուղիկէի կամաքներու վրայ հիւժախաւոր մօր մը պէս հակած, զիտես թէ իր ցաւերը պատմելու ու իր սրտի տարապայման վիշտը դուրս ցայտեցնելու երեւոյթ մը ունի: Ու Հայաստանի ամառի վայրերի այն տխրագոյնիկ թռչունը, բուն, անոր կիսաքանդ կամարի վրայ թռտած՝ իր չարագուշակ սեւքով կը սեղմէ իր սրտերը: Լուռ ու մուռն, կը հետագօտենք աւերակ շէնքերի ու կիսափուլ տաճարի բեկորները, լարուած ուշադրութեամբ մը կը կարգանք հայկական գոթագիր տառերով գանազան արձանագրութիւնները, որոց թուականները 3-4-5 դարու անցեալ մը կը յիշեցունեն: Երկիւղածութեամբ կը ծոխնք մայր տաճարի մեծ դրան հանդէպ՝ վրասակների տակէն նշմարուող սապանաքարի մը վրայ, ուր 972 թուականին հետ «սապան հանգստեան մեծին...» բառերը միայն ընթեռնելի մնացած են:

Ու այս ամէն հակազդեցիկ սպաւորութեանց տակ, ձիերնիս հոն՝ Ս. Հայրապետի կիսաւեր վանքին արծաթափայլ աղբերակի մօտ՝ դարբնու բեռնին տակ գտնուած ձեռքերի մը պէս կ'ըստնենք ու մտքով յոգնած, կը նստինք այդ դարբնու ծառի հովանիին տակ, երեսնիս զէպի արեւելք. խոհեղու անսանձ թեւերով կը գլխենք հորիզոնը, որ կը բացուի՝ անտառախիտ լեռներու եւ գեղատեսիլ հովիտների տարածութեամբ հարաւէն մինչ կեցանի, կեդրոնական Նիղանի ու լեռնային կարճկանի (Ուրանից) բարձր սարերը, արեւելքէն՝ կարկառի, Մոկաց ու Ռշտունեաց ամենի լեռները կը ձգի: Ու ժամերը որ կը սանին հոս, այս աւերակ մենաստանի շուրջ, հայրենի Ս. հողին վրայ, անըմբռնելի են... Չարչրող մտածմանց ծովու մէջ մեր մտքերը խեղդուած, կը մոռնանք մեր ճանապարհորդական պաշարը: Ու միայն Ս. Հայրապետի գուլալ աղբերակի պաղ ջրով կը գոհանանք մեր երթիթացած սրտերը զովացնելու:

Տխուր ու սրտակտուր մտածումներով բեռնաւորուած գլխիկոր կը մեկնինք այդ վայրէն ու մէկ ու կէս ժամի անհողութեամբ շարունակելով մեր ճամբան կը հասնինք Ընծաքար լեռան պատուանդան կապուտկողայ Ս. Յակովբի վանքին հանդէպ, «Գա-

Մեզի հոն էր գտնուումը
Ս. Մ. 4
D. L. 11. 4
(A. 11. 4)

պուտոկոզայ գլուխ» լեռնակի գա-
զաթը: Այսպիսի գարձեալ կը փոխ-
ուի հորիզոնի տեսարանը: Ռշտուն-
եաց արեւմտեան լեռնային բաժինը՝
երկու ժամու տարածութեամբ կա-
նանջ հովտի մը ու պուրակաւոր լեզ-
ուների գրկախառնութեամբ կը պար-
զուի աչքիդ: Ս. Յակոբի վանքը՝
Լ'նձակ անուն 25-30 անուոր հայ
գիւղի հարաւը, Լ'նձաքար լեռան կա-
նանջ զոտնցքի ներքեւ կը տեսնուի
անմիջապէս: Անկարելի է այս առ-
լի վայրէջքէն ձի նստիլ ('): Հե-
տիտան ձիերնիս կը քաշենք, ու ան-
համբեր կաճապարենք վանքը հաս-
նիլ: Եւ անզաւարկէս կը հասնինք
Ս. Յակոբի վանքի մեծ դրան առ-
ջեւ:

[Շարունակելի] ՊԵՏ

ԵՐԿՈՒ ՔԱՅԼ ՄԷԿԷՆ

—(—)

Իսկ մըն ալ Մամբրէի խնդրով—
նախ՝ ես կը պնդեմ որ «մեր հինգե-
րորդ ընկերոջ անունը Մամբրէի ան-
ձանօթ» ըլլալու մասին արուած ար-
փարեան վկայութիւնը չի բաւեր,
անոր չհաւատալու շատ պատճառներ
ունիմ: Մամբրէն ալ ողջ չէ որ վկա-
յէ. ես ալ թէ ամբաստանեալ եւ թէ
դատարագ միանգամայն չեմ կրնար
ըլլալ, որով այս կէտը կը մնայ մու-
թին մէջ բարեկամիս սեւ զէմքին
պէս: Եւ ինչ որ յայտնի է, սա է
թէ Մարտով հրապարակուած «Մաս-
նակներէն» անդամներէն ինք մի-
այն ձերբակալուած է, ի՛ր իսկ ըսա-
ծին համեմատ, նամակի մը պատճա-
ռով:

Հիմա կը մնայ ճշդիւ մեր փախըս-
տականներուն հարցը: Անոնցմէ
մէկը, ան, Լեւոն ԼՅ. Բաշալեանն
էր: Արեւելի խմբագրատունն եւ
ուրիշներ կրնան վկայել որ, Ար-
փար ԼՅէնտի ձերբակալութենէն
առ նուազն տասը-տասներկու օր
ետքը փախուտը դրած էր մեր քա-
ղամարտիկ հերոսը, եւ այստեղ շա՛տ
à propos կրնամ յիշեցնել որ ինք
ձերբակալուած է նոյն 9 ուրբաթ կէս
օրի մօտ. իսկ փախստականը հրա-
տարակեց մեր Մալիսի նոյմ. 15
թիւը, որ գոյութիւն ունի աշխարհի
վրայ. ծախուած թիւերուն զան-
ձուներն ալ ըրաւ ու յետոյ՝ «Մնաք
բարովը»: Անոր հետ եղած է երկ-
րորդին ալ փախուտը: Եթէ Մամբ-
րէն, անպատճառ, պէտք է ձերբա-
կալել զար ատոնք, ի՞նչու առջի
վկայրեկանին չի ժողովէր ու ասպու-
ղի պէս սպասէր որ իր պարարտ որսերը
խաղաղութեամբ թռչէին Միջերկրա-
կանէն ներս՝ զէպի խաղաղ նաւա-
հանգիստներ: Թող սպասէր, թող
սպասէին ք ու եթէ կը ձերբակալուէր
ու կը ձերբակալուէին, այն ատենը
կը խօսէինք: Ուրիշն, «Մասնա-
խուտը» մէկ հոգի ձերբակալուած էր,
ինքը, Արփար ԼՅէնտի, նամակի
մը պատճառով, որ թէ ի՞նչպէս ձեռք
անցուած է, ա՛ն ալ ճշգրտէս յայտ-
նի չէ, վասն զի արփարեան վկա-
յութիւնները ա՛յնչափ ճիշդ են ի-
րեն համար, ո՛րչափ առեղծուածական
ուրիշներու: Ո՞վ հաւատած է իրեն
նամակը ձեռք անցընելու պարագա-
ները այնքան մանրամասնօրէն:
Ոստիկանութեան նախարարը, բնա-
կանաբար, իր հաւատարմ Մամբրէին
զաղտնիքը չէր կրնար հաղորդել. դա-

լով Մամբրէի, — եթէ իրաւ ինքն էր
հեղինակը, — ա՛ն ալ պիտի գրուչա-
նար այդպիսի յայտնութիւն մը բնե-
լու իր մասին: Իսկ եթէ այնչափ
մտերմութիւն ունէր կամ մշակուե-
ցաւ ձեռնմաս պաշտօնէութեան հետ,
որ ամէն գաղանիք բացուեցաւ Ար-
փար ԼՅէնտիի առջեւ, ատոր բնելիք
չի մնար. ու մենք ալ, հասարակ
մահկանացուներ, չենք նախանձիր
մութի մէջ եղած բարձրացումներու:
Մամբրէով այսչափ, գոնէ հիմա-
կու հիմա: Երկրորդ քայլով մըն ալ
կանցնիմ թիւթիւնեանի հարցին:

1892ին, Մայիսի 9, չարաթ օրը
բանախն արձակուեցայ: Ոստիկանու-
թեան նախարարը բախտաւոր հա-
մարեց զիս որ Պոլսի պատուաւոր
հայերը, մեծ մասով, միջնորդած էին
ինձի համար: Ինչոյն ատեն ըսաւ թէ
միջնորդած է թիւթիւնեան ԼՅէնտի
ալ, եւ ցոյց տուաւ այն սեղ նստած
մէկը: Ես, բնականաբար, մէկ պա-
տասխան կուենայի, — չնորհակալ
եմ ամենքին ալ: Այդ վայրկեանին
ճանչցայ թիւթիւնեանը:

Հետագայ օրերէն թէ ի՞նչպէս ե-
ղած էր որ, անձանօթարար, միջ-
նորդած էր ինձի համար այդ անձը:
Ինչոյն մէջ եղած ատենս՝ դուրսը
տարածուած է եղեր թէ ես ձերբա-
կալուած եմ թիւթիւնեանի ձեռ-
քով: Ս. Սալի քահանաներէն մէկն
ալ, արդէն ծանօթ անոր իբրեւ իւս-
կիւսարցի, կերթայ ու յայտնակէս
կըսէ որ դուք ձերբա ալել սուած
էք Հրանդը: Թիւթիւնեանի ծանր
եկած է. մանաւանդ սեսած է որ ա-
մէն կողմէ համակրանք կայ անուանս
բողոքիքը, եւ մանաւանդ սեսնելով
որ իմ վրայ յարուցած ամբաստա-
նութիւնը չի կրնար հաստատութիւն
գտնել, միջնորդած է ինքն ալ: Պա-
րագայ մըն էր սոս որ անոր մէկ բա-
րեկամիցութեան հետքը կը թողուր
քովս անհատաբար. ատով ծանօթ
մացի իրեն, եւ փոյթ ունեցայ որ
ուրիշներն ալ օգտուին: Վկայու-
թեան պէտքը չեմ զգար:

Գէնի ձերբակալուած էր գաւառա-
ցի երիտասարդ մը, Կոնստնտին ալ կը
փափաքէի որ արձակուէր: Ինձի դի-
մումներ ալ եղան որ ձեռքէս եկածը
ընեմ թիւթիւնեանի մօտ: Ծիշդ այն
օրերուն հրատարակուած էր թիւթ-
իւնեանի վէպը, վաշխառուի աղ-
ջիկը: Հեղինակը, չորս մէծիտի հետ
ինձի զրկած էր չորս հատ գիրք,
նամակ մըն ալ, որով խնդրած էր
ինձմէ որ Հայրենիքի խմբագրու-
թեան յանձնեմ, ու «ազգ» գրուի:

Ուրբաթ օր մը, կէս օրին, խմբ-
ագրատուն մտայ: Տեսակցութիւնս
եղաւ միմիայն Շահնազարի հետ,
նամակը կարդացի, ու ըսի որ եթէ
ազգը գրուի, թերեւս յաջողինք
ամենքիս ծանօթ բանտարկեալը ար-
ձակել տալ: Շահնազար վարանեցաւ,
կեցաւ, ու յետոյ ըսաւ թէ խնդիրը
զրամի վրայ չէ, իսկ ես ըսի որ տար-
բեր տեսակէտներով ձեզի հետ համա-
ձայն եմ, ու քիչ մըն ալ ստաջ ան-
ցայ: Բայց միեւնոյն ժամանակ զէպը
մը յիշեցուցի: Միւրիւնեանի վրայ
Հայրենիքի առեղծ խմբագրականներ
հրատարակեց, ու եթէ չեմ սխալիւր,
Լ. Բ. ստորագրութիւնով. գրուած էր
թէ մարդը աղջկան մը կուսական
արիւնին մէջ լուսացուած էր ու կսկծալի
մահուանն ալ միակ պատճառը: Կանի
մը չարաթ ետքն ալ՝ այդ մարդուն
անունով վարժարանական ազգը հը-
րատարակուեցաւ Հայրենիքի մէջ:
Ինչոյն օրը խմբագրատուն վազեցի,
Արփարը սեսայ ու երբ ըսի, թէ

«պու նէ՛ լահանայ, պու նէ՛ թուրչու»,
ինձի պատասխանեց թէ «ազգը»
առեւարական բաժնին մէջ հրատա-
րակուած, կարեւորութիւն չունի:
Արդ, քանի որ Հայրենիքի մէջ
այդպիսի մաս մը կայ, թիւթիւն-
եանի ազգը հրատարակուելով ճիշդ
առեւարական բաժնին մէջ, մեր
բանտարկեալը կարձակուի: — Շահ-
նազարը քիչ մը աւելի կարմրած:

—Կրնամ, ըսաւ:
—Կրնամ, ըսի:

Ու «ազգ» առաւ ձեռքէս՝ առանց
զբանտերը առնելու: Ահաւաստիկ համ-
բաւոր ազգին խնդիրը: Շահնա-
զարը ողջ է, իր խղճին կը թողում:
Ինչոյն իրիկունը խմբագրատուն
զարձայ գիտնալու որ եթէ շարուած
է, պէտք է նոյն գիշեր թիւթիւն-
թիւնեանի օձիքը բռնէի: Երկուքը
մէկանց, Լեւոն ու Արփար ԼՅէնտի
զիմացս ելան ու ըսին թէ չըլլար—
Հակառակը չեմ պնդեր ըսի, ու կրկ-
նեցի ինչ որ խօսած էի Շահնազարի:
Այսքան պարզ իրողութիւն մը ճի-
ւղագոյն կերպարանք ստած է բա-
րեկամիս աղիքներուն մէջ, որպէս զի
հերոսաբար զիմացս ելլէ ու իմ «քե-
րած ծանուցումին ձեռագիրը պատ-
ուելով երեսիս նստէ»: Եւ ատով ալ
գոն չեղած, զիս «վերջապէս վունտե-
լու» գրեցազնութիւնը գործ դրած է:
Չեմ նախանձիր զափնիւնից, Ար-
փար ԼՅէնտի: Միայն գրեմ որ
Կոնստնտին քանտէն արձակուեցաւ հինգ
ամիս ետքը:

Զինքը չոյնելու համար ըսեմ որ իմ
յարաբերութիւնս շարունակուած է
Հայրենիքի հետ անկէ շա՛տ ետքն ալ:
1895ին յունվարի գրական Հայրենիքի
մէջ «Երկու վերմակի տակ» խորագ-
րով յօդուած ունիմ: Հրատարակու-
թեան իրիկունը երբ Սրբանոյտ մը-
տայ, խմբովին նստած էին Հայրե-
նիքեան բարեկամ երս: Զօպանեան
ոտքի ելաւ, ձեռքս սեղմեց համակ-
րանքով ու ըսաւ թէ հրաշալի եր:
Ան ալ ողջ է, ու յօդուածս ալ կը
մնայ: Այդ մասը կարճ կը կապեմ:
Թէ երբ կամ ի՞նչպէս խղուեցաւ մեր
յարաբերութիւնը, իր որոշ, այա-
ցուցական պատմութիւնը ունի:

Ի՞նչ կար, սրբամաքուր բարե-
կամս: Թիւթիւնեանի անունը Հայ-
րենիքի մէջ: — Լաւ, ես կրնամ,
ամբողջ աշխարհքի առջեւ, մէջտեղ
հանել Հայրենիքի թիւեր, ուր թիւ-
թիւնեանի անունով «ազգ»եր հրա-
տարակուած են մէկուկէս տարի առաջ,
եւ ա՛յն ատեն՝ երբ թիւթիւնեանի
Պոլիս զարձին յիշատակը տաք
էր, անուանը բողոքիքն ալ աւելի
վերաւորուած զգացումներ կային:
Բայց «այդ թշուառականը գրական
համբաւ չինելով, ժողովրդականու-
պիտի վաստիկ», կըսէ Արփար ԼՅ. ու
ստոր համար գիմարած է ծանու-
ցագրին: — Թիւթիւնեան, իր վե-
պէն շա՛տ առաջ, իբրեւ գրող շա՛տ
աւելի բաներ գրած էր յիշափոխա-
կանի մտքով. ինքը շա՛տ աւելի լաւ
համոզուած էր որ, իր նախորդ զը-
րածները, վերջին գրածներուն հա-
մեմատալով, աւելի փնտռուած ու
տարածուած էին ժողովուրդին մէջ
ու յիշափոխական թերթերու մէջ:
Ուստի ազուէսի արամբանութեամբ
չինուած կարկուտք մըն է որ Ար-
փար ԼՅէնտիի հին ազուէսի մուշ-
տակին վրայ կարելի է տեսնել:

Առ, Արփար ԼՅէնտի, ա՛ն ալ զի
զրպանդ:

Պ. ԿԱՐԱՊԵՏ ԿԷՄԻՃԵԱՆ
Կիրակի օրը, սափրիչին խա-
նութը ամբողջած պահուն, Պ.
Կարապետ Կէմիճեան օրտի Լաթ-
ուածէ յանկարծամահ եղաւ, ու
թէ եւ ժամանակին բժշկական
դարմաններ օգնութեան հասան,
ու է արդիւնք չունեցան դժ-
բախտաբար:

Այս անակնկալ մահ օրը, կուզայ
կեանքով ու առողջութեամբ զե-
լուն երիտասարդ մը շանթահար
ընել, սաստիկ ցաւ պատճառած
է հանգուցեալին բազմաթիւ բա-
րեկամներուն: Հակառակ իր ա-
ռած միջակ կրթութեանը, Պ.
Կէմիճեան, եռանդով ու զգա-
ցումով լի, վերին ծայր կը հե-
տաքրքրուէր ազգին վիճակին ու
յիշափոխութեան գործին հա-
մեմատրէն կը սատարէր: Բաղ-
մանայ հաստարիմ ու գործուն-
եայ պաշտօնեան էր Տափուտեան
տան, եւ մանաւանդ, ինչ որ ա-
մենէն ցաւալին է, միակ նեցուկն
էր իր հէք ծնողաց:

«Շարժում» խմբագրութիւնը,
որ շատ մօտէն կը ճանչնար դժ-
բախտ երիտասարդը, կը փո-
թայ իր ցաւակցութիւնը յայտ-
նել անոր բազմաթիւ բարեկամ-
ներուն եւ անմխիթար ծնողացը:

ԴԵՍ ՈՒ ԴԵՆ

—(—)

Ձարը, Կովկասի կառավարչա-
պետին 1897 տարուայ զեկուցա-
գրին, ինչպէս նաեւ Բագուի,
Գոթայիսի, Թիֆլիսի եւ Երե-
ւանի նահանգներու գրութեան
մասին 1896 տարուայ հաշիւնե-
րուն վրայ, հրամայեց է առ որ
անկէ որպէս զի թրքահպատակ
հայ զաղթականներուն թոյլ տան
Կովկասի սահմաններէն թուրքիւ
վերադառնալ առանց մաքսային
ձեւակերպութիւններու:

Տարուան մը ընթացքին մէջ,
եթէ զաղթականները մեկնած
չըլլան, կառավարիչները իրա-
ւունք պիտի ունենան հեռացնել
զանոնք, զաղթականներու հա-
մար հաւաքուած նուէրներէն ճա-
նապարհածախս տալով ամենէն:
կարօտեալներուն:

Մ. Միւրաւ անգլիացի
քարոզիչը Ձատկի Գ. օրը վանոյ
նորայէն եկեղեցիին մէջ քարոզ
խօսեց է, թէ եւ եկեղեցիներու
բեմնաշխարհականներու խօսիլը
սովորութեան հակառակ է: Մ.
Միւրաւտի քարոզած պահուն,
անգլին՝ պարագայէն օգտուելով՝
բողոքական շրջուն քարոզչուհի
մը վերնատուն ելած՝ հայ կիներ-
րուն մէջ կը գործէր յորդորելով
զիրենք թէ պէտք է նորոգեալ
քրիստոնէութիւնը ընդունին եւ
Հայ տիկիները այնքան սահ-
ճութիւնով ընդունեն եւ այս
խօսքերը որ վերնատան մէջ ու-
րուում եւ վէճ է ծագեր ու պեր-
ճախօս քարոզչուհին ստիպուեր է
սանդուխը ձեռք առնել:

(*) Կապուտկոզայ այս զանգիւղը
իր թիւթուութեան պատճառով ջորե-
պաններէն ու ձիապաններէն «կուզ-
կուենկոան» անունը ստացած է:

Հացի սղութիւնը ոչ միայն Պոլսոյ այլ նաեւ շրջակայ գիւղաքաղաքներուն մէջ շփոթութիւններ առաջ բերեր է։ Այսպէս Չաթալճաի մէջ խոտովութիւնը այն աստիճան սաստկացեր է որ մեռնողներ և վիրաւորեալներ եղեր են ու քաղաքը դիտուորներու հսկողութեան տակ առնուեր է։

Գտար գիւղի Տ. Խորոզքահանան նամակով մը յայտնեց է Պատրիարքարանին, թէ ինք ամսական 10,000 զրուշի հասոյթի նոր աղբիւր մը գտած է Ազգ. Հիւանդանոցին համար։

Եկեղեցական մը երբ իրմէն դուրս մէկուն համար հասոյթի աղբիւրներ կորոնէ, ուրախաւ ինքնորութիւն մը ըրած կ'ըլլայ։ Կը մայրթեմաք որ հանձնարեղ Տէր հայրը յաջողի և այսինչ կամ այնինչ առարկային վրայ գրոյճաթով ժողովներու գաղափարը չըլլայ, ինչ որ ընդհանրացած սովորութիւնն է Թուրքիոյ հնարամիտներուն գրեթէ ամբողջութեան։

Թօփհանէի յանձնաժողովէն տրուած և Պատրիարքարանի ձեռքով զրկուած նպատէն Տիգրանակերտի բաժին ինկեր է 100 ոսկի, զոր առաջնորդարանը բաժնէ կարօտեալներուն, մարդ գլուխ։ . . 30 փարաի հաշուով։ Թուրք յանձնաժողովին սփոփարար ջանքերուն ըսելիք չիկայ։

Արտասահմանի երկու թերթերու նպատին համար, Ֆիլիպպի մէջ թատերական ներկայացում մը տրուեր է և հասոյթը, 30 ֆրանգ, յանձնուեր է երկու խմբադրապետներուն, առաջ տա-

նելու համար իրենց ձեռնարկը, որ է հայ երիւրի և կիլիկեան խորխու լեռնաշղթային պանծալի անուաները ամէն շաբթու նսեմացնել։

Գտարական նախարարութիւնէն Պատրիարքարան հարգողուած է թէ վերագործող գաղթականներէն ասկէց ետքը ոչ թէ հինգ այլ միայն երկու երաշխաւորներ պիտի պահանջուին։

ԲԱՂԱՔԱԿԱՆ ԴԵՊՔԵՐ

Տ Ե Ս Ո Ւ Թ Ի Ն

Սպանիայէն ետքը, այս պահու Նուալիան ալ մատնուած է ներքին շփոթութիւններու որոնք սակայն երբեմն ճշմարտ ապուտամբութեան գոյն կ'առնեն։ Հացի խնդիր մըն է պարզապէս։ Չինւորական պատրաստութիւններու պատճառով գրուած ծանր տուրքերը և ուրիշ հանգամանքներ ևրկիւր ծայրայեղ ազդատութեան, գրեթէ անթուրթեան մատնած են։ Միւրեք քաղաքը խոտովութիւններու կեդրոնն է. նոյն իսկ լինդանթ գործածուեր և ուրիշ ժողովուրդ է վանք մը ուր ապստամբ ուսանողներ ապստամուած էին։ Միւրեքն զատ՝ Ֆիւրէնցա, Լիվորնո, ձէնօվա, Վենետիկ և ուրիշ վայրեր պաշարման վիճակի են թարկուած են։

Ֆրանսայի մէջ օրուան գլխաւոր խնդիրն է երեսփոխանական նոր ընտրութիւնները։ Մինչև հիմա կատարուած ընտրութիւն-

ները հանրապետականներու նըպատաւը եղած են։ Ընկերակալական Պ. Փուէս չէ կրցած ընտրուիլ։ Ընչուածները պաշտպան մը կը կորսնցնեն ֆրանս, երեսփոխանութեան մէջ յանձին Պ. Փուէսի, որ յայտարարած է թէ ժամանակ մը հանրային կեանքէ պիտի քաշուի։

Պատերազմական լուրերը տակաւին անորոշ և հակասական են։ Յայտնի է որ թէ՛ ամերիկեան և թէ՛ սպանիական աղբիւրէ բխած հեռագիրները հեռի են ճշգրտ անթիւղծութեան մը գրոյճը կրելէ։ Սակայն ստոյգ է թէ հոն հոս փոքրիկ ընդհարումներ տեղի ունեցած են աւելի կամ նուազ քանակով պատերազմիկ կողմերուն և որոնց մանրամասնութիւնները կիյնայ մեր թրքերէնի բաժնին մէջ։ Սպասուած վճռակաւ բախումը տեղի չէ ունեցած տակաւին։

Ռուստոսանը այս պահու գարձեալ սովի ուրուականը ունի իր թեւերուն վրայ։ Պաշտօնապէս յայտարարուած է թէ սովի ենթարկուած նահանգներուն թիւը 16 է, 14 միլիոն բնակչով։ Սուսալի չէ որ հասարակութեան բարեգործութիւնը կարենայ հիմնական օգուտ մը ունենալ, և եթէ աղղու միջոցներ ձեռք չառնուին 1891ի սովին պէս հարիւր հազար տուրներ զոհ պիտի երթան անթութեան։

Վերջապէս յունաթրքական դաշնագիրը սկսած է գործադ-

րուիլ։ Ա. Պոլսոյ նիգամները ճամբայ ելած են իրենց տեղերը երթալու։ Մախուսէի ութ շոգեհաններ Վոլո գացած են և թուրք զինուորները անցնել շաբաթ օր սկսած են հետզհետէ նաև նստիլ։ Երկուրդի շրջանակներու մէջ մը տաղբութիւն կայ եղեր այդ զինւորներուն մէկ մտտով Աբդուլոյ, Պուլիարիոյ և Գարատաղի թուրք սահմանազուխները ամրացնել։

Ապրիլ 29ին, Աւստրիական զարական Պատուիրակութիւնները ներկայացան Փրանց-Ենդէֆ կայսեր, որ երկու նախագահներու ճառերուն պատասխանելով ըսաւ թէ բոլոր մեծ տէրութեանց հետ բարուք յարաբերութեան մէջ են, թէ թուրքահեթէն խաղաղութեան կնքումով կացութիւնը վերջնական լուծումատանալու վրայ է և յոյս կուտայ որ մեծ տէրութիւններու գործակցութեամբ շնորհիւ Արեւելքի քաղաքական վիճակը խաղաղութեան անխախտ հիմ մը ստանայ։

Կայսրը կը յիշէ Աւստրիոյ զօրաց և նաւատորմին մեկնումը Կրէտէէ և այս խնդրին լուծմանը համար կատարուած գիւանազիտական բանակցութիւններէն Աւստրիոյ-Հունգարիոյ հրաժարիլը։ Ցաւ կը յայտնէ Սպանո-Ամերիկեան պատերազմին հաւմար որ առաջ եկաւ հակառակ Պապին և մեծ տէրութիւններու աղղու միջամտութեանը։

---)(---

ՌՈՒՍԻԱ ԱՐԵՒԵԼԷԻ ՄԷՋ (3)

Ռուս կէս պաշտօնական թերթերը ուստական հակամտորդիչ քաղաքականութիւնը կսքօղեն այն հոգածութեան ներքեւ, զոր Ռուսիա ունի եղեր Տաճկաստանը պաշտպանելու համար «այն վերջնական անկումէն և փերեզակային շահագործումէն, որու կենթարկուի եղեր արեւմտեան սճով բարե՛նորդել ուղղոյ արեւմտաքի գիւանդէաններու և տնտեսագէտներու եռանդէն»։ Աւելորդ է այստեղ ծանրանալ այն կէտին վրայ թէ տաճկահայաստանները ու է ներքին սամ արտաքին շահագործումէ վրկելու միակ ճարը՝ Թուրքիոյ կառավարական գործերուն մէջ մանաւանդ քրիստոնեայ բնակիչներուն մասնակցիլն է։ Տաճկաստանը արտաքին հարստահարութեան պաշտպանելու անկեղծ փափաղը չէ որ կը մղէ Ռուսիան որպէս զի հակառակի ընդարձակ բարե՛նորդումներու, այլ շատ մը ուրիշ արձակունակ և անձնատիրական թելսագրութիւններ։

Իրապէս, Ռուսիոյ նոյն իսկ գիւանդիտութիւնն աւելի անկեղծ է քան անոր կէս-պաշտօնական լրագրատէրերը, որոնք այգիի տերեւի ներքեւ ծածկել կուզեն իրենց դիտաւորութիւնները։ Տակաւին ասկէ 70 տարիներ առաջ երեւելի ուս գլւանագէտ մը, Բօձօ տի Պօրկօ, Ագրիանուպօլսոյ հաշտութեանէն յետոյ (1829) երբ Բարիդ գետպան գնաց, կը յայտարարէր. «Ինքօլա Ա. կայսրը համոզուած է թէ Տաճկաստանի մէջ ֆիզիկական և բարոյական ուժի այնպիսի սաղմեր կան, որոնց նմանը և ոչ մէկ տեղ կայ մինչև հիմայ և եթէ Սուլթան Մահմուտ աւելի կանուխ յաջողած ըլլար իր բարեփոխական ծրագրի բոլոր տարրերը մուծանել, Թուրքիա միւ համար անմատչելի պիտի դառնար. ահա թէ ինչու մենք ուստներս իրաւունք ունինք միւ շնորհատրել որ կանխեցնենք և յարձակեցանք Թուրքիոյ վրայ՝ տակաւին նա միւ համար վստահաւոր չգարձուած»։

Բօձօ տի Պօրկօ կակնարկէ այս սեղ Տիպիչ Չապալքասքիի թուր-

քիա ըրած արշաւանքը (1828), որ արգարեւ շրտեց Մահմուտի բարեփոխական ջանքերը, որոնք սկսած էին արդէն եէնիչէրիներու հրոսակներուն բնաջնջումովը։ Մենք այս տեղ չենք ուզեր ծանրանալ այն հարցի վրայ թէ արդեօք թուրքերն իրենք իրենց կրնային իւրացնել եւրոպական բէֆօրմներ, բայց ամէն պարագայի մէջ Թուրքիոյ քրիստոնեայ աղղութիւնները կենդանի շահեր կակնկալէին այդ բէֆօրմներէն։ Իրենց զարգացման յոյժ զօրաւոր մղում պիտի տային տնտեսք։

Նշանակելի է թէ Թուրքիոյ բարե՛նորդիչ երկու գլխաւոր օրէնքները—Կիւլհանէի Հաթթընէրիֆը (Թանզիմատ) 1839 նոյմ. 3ին և Հաթթըն-Հիւմայունը 1856 ին, ընդունուած էին արեւմտեան եւրոպայի պահանջումով և ոչ թէ Ռուսիոյ։ Այս օրէնքներէն մէկը՝ դէպի ինքնիշխան-տնտեսական գործունէութիւն մղեց պուլկարները, իսկ միւսը՝ դէպի ինքնօրէն—կրօնական գործունէութիւն։

Ռուսիա՝ Թուրքիոյ մէջ քաղա-

քական լայն բարե՛նորդումներու կը հակառակի նաեւ այն մտածումով թէ այդ տեսակ բարե՛նորդում մը քայլ մըն է դէպի արեւելեան խնդրի «խաղաղ լուծումը»։

Եւ արգարեւ եթէ երէկ Հայաստան ինքնօրէն եղած ըլլար, եթէ վաղը նոյնը պատահէր նաև Մակեդոնիոյ, եթէ նեղուցները չէզոքանային ու Թուրքիոյ մնարակօս մը և Պօլսը— որ իր նշանակութիւնը կը կորսնցնէ այդ պարագային—ստով կը փակուէր արեւելեան խնդիրը։ Սակայն այս հաշուէն դուրս կը մնայ Ռուսիա, որ ոչ մէկ կերպով չուզեր թող սալ որ այդ երեք կէտերէն ո՛ր է մէկը գործադրուի։ Արեւելեան խնդրին խաղաղ լուծումը՝ նեղուցները իր ձեռքն անցնելու կարելիութեանց կը զրկէ Ռուսիան։ Ան ի հարկէ առանց քրժբախտ պարագաներու բերման, չպիտի հրաժարի իր «աւանդական երազէն»։

Տեֆթ. Բախովսի
(Շարունակելի)

ԲՕԼԻԹԻԳԱ

Մ Ո Ւ Հ Ա Ր Է Պ Է

Կէշէն հափտաքի կէրէք Սպանիա կէրէք Ամէրիգա մէնպայարտան կէշէն թէլէկրաֆ հափտաթ սաթը Անթիլ ատալարը գուրպինտէ պիր մուհիմ միւսատէմէնին վուգու պուլմուշ օլտուզու եախոտ պուլաճաղընը հիւս իթտիրմէքտէ իտիլէր իսէտէ, պիւ աքիս շիմայիէ գատար պէօլլէ պիր մուհիմ միւսատէմէ վուգու պուլմամը ալըր. Սպանիա սունանմար տահա սէրպէսթճէ մէյտանտա կէշիմէյօր, վէ Ամէրիգա տօնանմար գօմանտանը ամիրալ Սամբուն տէնիզ տէնիզ կէշիպ անը արամագտա իսէ տէ, բասթ կէթիմէմէքտէ տիր:

Կէօրիւնիշէ նազարէն, պիր իքիւնի միւսատէմէտէ մաղուպ օլմամագ իշին, Սպանիա գուլվէթը պահարիշէսինի պիր եէրտէ ճէմ իթտիրքտէն սօնրա Եանքիլէրէ գարըը կէօյիւս վէրէճէք տիր:

Ամէրիգա տօնանմար սպանիալըլար թարաֆընտան նակէհանի պիր հիւճիւմէն գօրգօմագտա օլուպ, տէօրթ կէօզ իլէհէր թարաֆը արաշտըմագտա տըր:

Մանիլայը զապթ իթմէք իշին 15—20 պին սաքէր գարիպէն Ֆիլիբին ատալարը Ամէրիգա տօնանմարնա կէօնտէրիլէճէք տիր: Բէզա, Բուպա արըլարընա եարատըմ իշին Թանբատան սաքէր եօլա չըգարըմագտա տըր:

Մայիս 1տէ Լոնտրատան քէշիտէ օլուան պիր թէլէկրաֆ պէյանընճա, ամէրիգալը տէօրթ զըրհը Սիէնֆուէկուս (Բուպա) իւզէրինէ հիւճիւմ իթմիշլէր վէօ սըրա սաքէր եիւքիւ վարօլար գըլըյա եագլաշմըլար տըր: Սպանիալըլար պու հիւճիւմի կէրի սիւրմիւշլէր իսէ տէ, ամէրիգալըլարըն աթէշի թէլէկրաֆ մէրքէզինի թախրիպ իթմիշ տիր:

Ամէրիգա զըրհըլարը Սիէնֆուէկուս քէօրֆէզինին տիկէր թարաֆընա չիքիլիպ եէնիտէն գարայա չըգմայա թէշէպպիւս իթմիշլէր իսէ տէ թէքրար կէրի սիւրմիւշլէր իմիշ. օն տէօրթ սպանիալը եարալանմը զէ գափկա սէքիզ սաաթ սիւրմիւշ տիր:

Այնը թէլէկրաֆա նազարէն, ամէրիգալը ալթը ատէտ զըրհը Գարտընաս (Բուպա) իւզէրինէ տախի հիւճիւմ իտիպ, 2,000 մէթրօ ուզագտան Սպանիանըն «Անթօնիօ Լօրէզ» թօր զըրհըլարընը մահվ իթմիշ վէ տիկէր պիր վարօրը զէտէլէտիքտէն սօնրա գարայա չըգմագ իսթէմիշլէր իսէտէ: Սպանիալըլարտան կէօյա կէրի սիւրմիւշլէր տիր:

Մայիս 2 թարիլիսի պիր թէլէկրաֆա կէօրէ, Սիէնֆուէկուս

գափկաւընտա պիր ամէրիգալը թայֆա էօլմիւշ, ալթը աղըրճա վէ պիր գաշ հաֆիֆճէ եարալանմըլար տըր: «Մարպիտ, նաշիլի» զըրհըլար վէ պիր թօր վարօրը պու գափկայա իշիլարագ իթմիշլէր տիր: Պուլարտան հիշ պիրիսի զէտէլէնմէմիշ տիր:

Նիւեորք պէօյիւք թիճարանընտան Մ. Օլիվըր Պէլմընգ հիւքիւմէթէ միւքէմիլ պիր զըրհը հէտիլէ իթմիշ տիր: Գալիֆոռնիա չըմէնտըֆէն սահիպլէրի տէօրթ միլիոն տօլար թէճէմիւիտիպ պիր զըրհըլար եարաճագլար տըր:

«Բիւրիթէն» ամէրիգալը մօնիթօր վարօրընը բաթլաթմագ թէշէպպիւսինտէ թուլուլմուշ օլան իլէզիաս նամ սպանիօլ իտամ ճէզասընա մահքիւմ օլուպ թէյլօր գալէսինտէ թիւֆէնկէ թուլուլմուշ տըր:

Շահատէթ իշին եէսիր թուլուլան սպանիալըլար պու ճէզայա հաղըր պուլուճմուշլար տըր: Իլէզիաս իկիթճէսինէ էօլիւպ քէնտի ինթիգամընը ալընմարընը վաթանտաշլարընա բէճա իթմիշ տիր:

ԹԻՒՐԻՒԱ ԻՆԷՒԻ

Սթանպօլ րուս էլշիսի Մ. Զինովիէվ կէշէն հաֆթա Պապը Ալիէ պիր նօթա վէրիպ թիւրքրուս մուհարէպէսի թաղմիւնաթընըն թէտիէսի իշին ապրիլ 1տէ վէրմիշ օլտուզու թէպլիլիւն ճէվապընը վէ պու թաղմիւնաթըն թէտիէսինի թալէպ իթմիշ տիր: Ճէվատ պէյին Բէթրսպուրլա իթմիշ օլտուզու զիյարէթին պիր ֆայտէսի հուսուլա կէլմէմիշ օլտուզու պու նօթանըն թէսլիմի թաստիգ իտէր:

Սօն նիւմէրօմըլտա եաղմըլըրք քի Սթանպօլ էլշիլէրի թէսալիանըն տէրագապ պօշալմար իշին Պապը Ալիէ պիր նօթա վէրմիշլէր տիր: Պապը Ալի ճէվապէն նօթայը գապուլ իթմիշ օլտուզուընը պէյանլէ՝ թէսալիայը պօշալթմագ իշին լաղըմ կէլէն թէտապիրին էլէ ալընմըլ օլտուզընը սէօյլէմիշ տիր: Ասաքիլին նագլի իշին Վօլ լիմանընա վարօրը կէօնտէրիլմէքտէ տիր: Պապը Ալի թաղմիւնաթը հարպիլէնին թէտիէսի Պանք Ոթօման վասիթասը իլէ իճրա օլընմարընը բէճա իթմիշ տիր:

Պապը Ալի էլշիլէրէ պիրէր սիւքիլէր եօլլայըպ մուհարէպէճէ տէրիւհաէ իթմիշ օլտուզը վաղիֆէլէրի իճրա իթտիկինի սէօյլէտիքտէն սօնրա՝ զալէպէտէն քէնտիսինէ օլան բէք ճիւզի սէմիլէլէրի վէ Կիրիս մէսէլէսինտէ Սուլթանըն հիւքիւմրանիլէթինի վէ թիւրքիանըն թէմամիլէթինի մուհաֆազա հագընտա պէօյիւք տէվլէթլէրին

վէրմիշ օլտուզլարը վատը թէզքիւր իթմիշ տիր: Կիրիսին եէնի թէշէքիլի իշին միւզաքէրաթըն պիր ան էվվէլ իճրա օլընմարընը տախի բէճա իթմիշ տիր:

Հարպիլէ նէզարէթինտէն ալընան մալիւմաթա կէօրէ, շիմի թէսալիատա 133,000 թիւրքառքէրի պուլուճմագտա տըր: Ելըլարը տայիլէլէրի պու սաքէրլէրի Սրպիա, Գարատապ վէ Պուլկարիա սինօրլարընըն թաղվիէսինէ գուլլանմագ իսթէյօրլար ըմըլ:

Ալի ճէվատ պէյին Բէթրսպուրլա իթտիկի զիյարէթին սէմէրէսիզ գալմըլ օլտուզը իշին՝ Ղաղի Օսման բաշանըն թահթը նէզարէթինտէ պաշգա պիր գօմիսին օրայա եօլլանըլաճաղընա տայիլ Սթանպօլլա շաիյա կէզմէքտէ իմիշ:

Կիրլտին էվրօբալըլարտան միւրէքքէպ մահքէմէ թարաֆընտան շահատէթի էլլէմ օլան պիր թիւրք միրալայընա ճէլպ կիթմիշ վէ ճէվատ բաշա մէզգուրուճա չըգմարընը միւսատէ իթմիշլէր օլուպ, տալա վուգու պուլմամըլ տըր: Հաքիմլէր մէսէլէյի ամիրալարա հէվալէ իթմիշ օլուպ, մէսէլէ հալլ օլընճայա գատար մահքէմէ թաթիլ զալաճագ տըր:

Կիրիտտէ ամիրալարըն թահթը հիմայէսինտէ մուվագպաթ պիր ալթոնոմիա թէշէքիլինէ տայիլ էվրօբա տէվլէթլէրի պէյինտէ միւզաքէրաթ ճէրէյան իթմէքտէ տիր:

Մայիս 2 թարիլիսի Վօլօտան կէլէն պիր թէլէկրաֆա կէօրէ, իքի թիւրք վարօրլարը՝ սաքէր համիլ օլտըզլարը հալաէ Սէլանիկէ եէթիշլէր տիր:

Տ Ա Խ Ի Լ Ի Յ Է

«Բուռիէ տէ Պալքան» կաղէթասընըն պէյանընա կէօրէ, Բուսիայա հիճրէթ իթմիշ օլան պուլկար զապըլթանըն (սպայ) գըմըլ աղամը թահրիլէն պուլկար հիւքիւմէթինէ միւրաճաաթ իտուպ՝ եէնիտէն միլլի օրտուսունա գապուլ օլընմարընը բէճա իթմիշլէր տիր: Հարպիլէ նէզարէթինտէ պու միւրաճաաթ մէնֆաաթըլ սուրէթլէ գապուլ օլուճմըլ տըր զանն օլուճըյօր:

Չախիլէ ֆիլիպթընը բահալանմարնտան տօլայըլ Պուլկարիատան զախիլէ իլարաճընըն մէնի մէսէլէսի մէյտանա չըգմըլ տըր: Թիճարէթ վէ զըրաաթ նէզարէթինէ պու մուհիմ մէսէլէ իլէ մէշլուլ օլուպ՝ պուլկարիտանըն հէր թարաֆընտա Պուլուճան զախիլէն մըգտարը հագգընտա թալիմաթ իսթէմիշ տիր: պու թալիմաթը գապուլ իթտիքտէն սօնրա մէզքիւր նէզարէթ զախիլէնին Պուլկարիատան տիշարը չըգարըլաճաղը եախօտ չըգարըլմայաճաղը հագգընտա գաթի պիր գարար վէրէճէք տիր:

ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐ

ՏՐ. Թ. ԽՐ. ՍԹՕԹԱՆՈՎ և ՎԼԱ. ՏԻՄԻՐ ՏԻՄԻԹՐՈՎ՝ որոնք իրենց իրաւաբանական ուսմունքը Զվիցերիոյ մէջ աւարտած են, հաստատուած են Վառնա ընկերաբար գործելու և կը ստանձնեն պուլկարական ամէն կարգի գատարանաց առջեւ ամէն տեսակ գատերու պաշտպանութիւնը:

Խորհուրդ և բանակցութիւն Ֆրանսերէն, գերմաներէն, իտալերէն, բուլմաներէն, ռուսերէն, յունարէն, թուրքերէն և պուլկարերէն լեզուներով:

Վկայուած աղքատներուն գատերը ձրի կը պաշտպանուին: Գրասենեակ՝ քաղաքային գատարանի դէմ. իսկ բնակարան Գ. թաղ, թիւ 151:

ՃԱՇԱՐԱՆ ԵՒ ԶԲՕՍԱՐԱՆ

ՀԱՃԻ ԲԱՆԱՔՕԻՆ ՃԻՇԵՂ ԴԷՄԸ Կը բանեցուցէ Պ. Տիգրան Թիւֆհէկիւնեան և րնկի:

Արեւստին մէջ կատարելութեան հասած երիտասարդ հայու մը ձեռամբ սարքուած այս հովասուն, մաքուր ու գեղջակա հաստատութիւն ոչ միայն պատիւ կը բերէ հայ ճաշակին, այլ և մեծ ինքնա մը կըլլայ օր հայ ու օտար փոփոկակերներ իրենց գարնանային ու ամանային ժամադրավայր մը ընեն զայն զբօսնելու և ճաշելու, Պոնտոսեան ախորժարեր հովիւրուն ու Սիւ ծովի կապոյտ սարձուլիտան առջեւ:

Հակառակ այս հրապուրիչ տառեւութիւններուն, յաճախորդները պիտի գտնեն յոյժ զիւրաճաշակի զիներ թէ ըմպիլիքի թէ կերակուրներու մասին:

Պ Օ Ր Ս Ա

Վաղուս 6 Մայիս
ՊՈՒՂՏԱՅ
Վաղուս, լիպրա 47—51, հէքթօլ. 11—11.50 ֆրանք
Արապա, լիպրա 47—55 հէքթօլ. 10—12.50 ֆրանք
ԱՐԲԱ
Լիպրա 38—40 հէքթօլ 6.20—6.40 ֆրանք
ՄՐՍԸՐ
Վաղուս, լիպրա 57—58 հէքթօլ. 7—7.50 ֆրանք
Արապա, լիպրա 57—60 հէքթօլ. 7.80—8 ֆրանք

ՅԱՍՏՈՒԼԵԱ

100 օգգասը 15—20 ֆրանք՝ մալա կէօրէ
Առապա մուամէլէսի նարօլէն 21 ֆրանք հիսապը իլէ տիր.
Կիւնտէ 15—20 վաղուս վէ 15—20 արապա պուլտայ, 10—15 արապա արբա, կէլմէքտէ տիր:

ՏՊԱՐԱՆ, ՊՇԱՐԺՈՒՄՔԻ

Կը տպագրուին ամէն լեզուէ այցետոմս, հասցետոմս, նամակագրուի, հարտանեկան հրաւիրագրի, մահազգ, ինչպէս նաև պրօշիւռներ:

Գիներն յոյժ զիւրաճաշակի ուրիշ քաղաքներէ եկած յանձնարարութիւններ ճշգուլթեմը և փութով կը կատարուին: